ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԴԱՎԻԹ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՎՐԱՍՏԱՆ (Ք. ԹԲԻԼԻՍԻ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

Դավիթ Սահակյան, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ:

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Քաղաք Թբիլիսի (Վրաստան), 2023թ. ապրիլի 6-ից 7-ը:

3. **Հրավիրող կողմը.**

Վրաստանի էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարություն:

4. **Գործուղման նպատակը.**

Ապահովել մասնակցություն ս.թ. ապրիլի 7-ին Վրաստանում (ք. Թբիլիսի) կայացած Հայաստան-Վրաստան գործարար համաժողովին:

5. **Քննարկված թեմաները.**

Այցի ընթացքում կայացած հանդիպումների ժամանակ քննարկվել են ոլորտային երկկողմ համագործակցության հնարավորությունները, ոլորտային զարգացմանն ուղղված համատեղ ծրագրեր իրականացնելու հեռանկարները և նախատեսվող հետագա քայլերը:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Վրաստան այցի ընթացքում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Դավիթ Սահակյանը ս.թ. ապրիլի 7-ին գործարար համաժողովի շրջանակում հանդիպել է Վրաստանի խոշոր գործարար ասոցիացիաներից մեկի՝ «Business Association Georgia»-ի (BAG) գործադիր տնօրեն Լևան Վեփխվաձեի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել է հայ-վրացական տեղեկատվական տեխնոլոգիաների ֆորում կազմակերպելու հարցը, որը խթան կհանդիսանա բիզնես հասարակության և տեղեկատվական

տեխնոլոգիաների ոլորտի ներկայացուցիչների համար, հնարավորություն կստեղծի ընդլայնել հայ-վրացական տնտեսական համագործակցությունը՝ ստեղծելով բիզնեսը բիզնեսի հետ հարաբերվելու (B2B) հարթակներ, ինչպես նաև կնպաստի երկու երկրների ներուժի և հնարավորությունների մասին տեղեկատվության ներկայացմանը, համագործակցության նոր ուղղությունների բացահայտմանը, որը կարող է երկու պետությունների առաջատար կազմակերպությունների և հաստատությունների միջև համագործակցության լուրջ նախադրյալներ ստեղծել:

Համաժողովի ընթացքում Դավիթ Սահակյանը հանդիպում է ունեցել նաև Վրաստանի պետական և մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ, որի ընթացքում քննարկվել է հայկական ու վրացական ստարտափերի համագործակցության հարցը, մասնավորապես՝ երկու երկրների համապատասխան ընկերությունների մասնակցությունը Հայաստանում և Վրաստանում անցկացվող տեխնոլոգիական ցուցահանդեսներին ու թեմատիկ գործարար համաժողովներին՝ փոխադարձ ճանաչելիությունը բարձրացնելու նպատակով: Հանդիպմանը քննարկվել են նաև հայկական և վրացական վենչուրային հիմնադրամների շրջանակներում համագործակցություն իրականացնելու վերաբերյալ հարցեր:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Ս.թ. ապրիլի 7-ին Թբիլիսիում կայացած հայ-վրացական գործարար համաժողովի ընթացքում «Հայփոստ» ՓԲԸ-ի և «Վրացական փոստ» ՍՊԸ-ի միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր, որի նպատակն է ապահովել համագործակցության շրջանակ և սահմանել Կողմերի միջև աշխատանքային հատուկ պայմանավորվածություններ, ինչպես նաև ստեղծել հաղորդակցության ուղիներ՝ ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցերում արդյունավետ համագործակցելու նպատակով:

Հուշագրով նախատեսվում է համագործակցության նոր ձևաչափեր մշակել և կյանքի կոչել նոր ծրագրեր, այդ թվում՝

- Վրաստանից Հայաստանի Հանրապետություն և հակառակ ուղղությամբ փոստային առաքումների պայմանների բարելավում:

- Երկու երկրների միջև սահմանային ծախսերի իջեցում, որը կհանգեցնի հաճախորդներին մատուցվող փոստային ծառայությունների սակագների երկկողմանի նվազեցման:
- Երկու երկրների միջև էլեկտրոնային առևտրի զարգացում:
- Համատեղ ծրագրերի իրականացում՝ ոչ փոստային լոգիստիկ ծառայությունների ուղղությամբ:

Հուշագրի շրջանակներում «Հայփոստ» ՓԲԸ-ն հնարավորություն կունենա ոչ միայն բարելավել Վրաստանի հետ փոստափոխանակման գործընթացը, այլ նոր ծրագրեր իրականացնել «Վրացական փոստ» ՍՊԸ-ի հետ, ինչը թույլ կտա ներկայանալ հաճախորդներին նոր, մատչելի և որակյալ ծառայություններով:

«Հայփոստ» ՓԲԸ-ն և «Վրացական փոստ» ՍՊԸ-ն նախատեսում են անցկացնել կանոնավոր հանդիպումներ:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այցի ընթացքում պայմանավորվածություններ են ձեռք բերվել՝ շարունակելու քննարկումները համագործակցության ընդլայնմանն ուղղված ծրագրեր իրականացնելու վերաբերյալ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

Դավիթ Սահակյան

11.04.2023.

Միջազգային համագործակցության վարչություն

11.04.2023թ.